

ըլլալով, [Սուլթանը. վ. Մ.] կը վախճայ որ ապստամբին կամ դաւադրեան, քանի որ գանգաճարու մը մեծ թիւով ժողովուրդ կը հաւաքէ. ոչ ալ երգեհոն կայ ոճէ եկեղեցիի մէջ, քանի որ երբեմն, ունէ տօնական օրուան, շէտորներով պատարագի կ'ընկերանան Պոլսոյ մէջ:

Խոսան.- Եւ ինչպէ՞ս պատարագի կը կանչեն վանականները կամ եկեղեցականները:

Փետրո.- Փայտէ ու երկաթէ գանգակներ ունին զորս այստեղի մասն կը հնչեցնեն:

Մաթա.- Չեմ հասկնար ինչպէ՞ս կարելի է այդ:

Փետրո.- Բարակ, մեղ ու երկար տախտակ մը, առնուազմ՝ վեց կանգուն. մէջտեղը կանթ մը ունի՝ փոսի կանթի պէս, եւ մէկ ձեռքով կը բերեն օդին մէջ, առանց հագուստ թէ այլ բան դաչելու, եւ միւս ձեռքը մտրճ մը, որով ամբողջ վանքը կը շրջին հնչեցնելով տախտակը եւ հնչիւնի բոլոր այն տարբերութիւնները կը ստեղծեն, զորս մենք կ'ընենք մերիններով» (էջ 282):

5 Արեւելքի մէջ գտնուող քրիստոնէայ առասպելական երկրի մը թագաւորը, երբեմն նոյնացուած է Եթովպիոյ թագաւորին հետ:

6 Մասիսի ստորոտը գտնուող Ակոռի գիւղը, որ 1840ի մեծ երկրաշարժին կործանած է:

7 Բերոսոս՝ Բ.Ա. Գ. դարու պատմիչ, որ իր «Բաբելոնականք»ին մէջ նկարագրած է ջրհեղեղի եւ Նոյնեան տապանի անցքերը, թէ տապանը տեղադրած է Կորդուաց աշխարհը (Արարատի երկիր):

8 Ինչպէս սովորութիւն է երոպական մատենագրութեան մէջ, «Սոփի» ցեղանունը - որ կը բնորոշէր պարսկական ղըզլուպաշ («կարմիր գլուխ») ցեղը - դարձած է նաեւ պատուանուն: Մուշի 1504ի յիշատակարան մը կը նշէ, թէ «...վասն մեղաց մերոց մատնեալ է զմեզ Աստուած ի ձեռն օտար եւ այլադէմ արիւնարբու ազգին, որ Կարմիր գլուխ Սոփի ասեմ...» (Հայ ժողովրդի պատմութիւն, Բ. IV, Երեւան, 1972, էջ 82):

- 9 Էջմիածին:
- 10 Թաւրիզը Պարսկաստանի մայրաքաղաքն էր սեֆեան հարստութեան ժամանակաշրջանին: Սակայն, 1558ին Պարսկաստանի գահակալը Թահմասպ Ա. շահն էր (1524-1576), որուն անունը եւ բնագրին մէջ յիշուած Alaziaquin-ը իրարու հետ աղերս չունին: Այս վերջին անունը, մեր կարծիքով, թերեւս կրնայ կապ ունենալ շահի եղբոր Ալիսապ Միրզայի հետ, որ 1546-47ին անցաւ թուրքերու կողմը՝ Թահմասպի դէմ իր փորձած ապստամբութեան ճնշումէն ետք:
- 11 Carad կրնայ Կարսը ըլլալ, իսկ Bidlizը՝ Պիթիսն է: Կարսիա Սալիներո, ծանօթագրութեան մէջ (էջ 502) ճիշտ կերպով այս նոյնացումը բերելէ ետք, վերլուծական ցանկին մէջ (էջ 512) կ'առաջարկէ Թիֆլիսը, ինչ որ վրիպում մըն է: Ինչ կը վերաբերի իր Hemet-Համաթ (Սուրիա) նոյնացումին (էջ 502), թէն հնարատր, պէտք է ենթադրել որ հեղինակային սխալ մըն է, քանի որ Սուրիան երբեք մտած չէ սեֆեան Պարսկաստանի կազմին մէջ:
- 12 Սալիներո կը նոյնացնէ Hazun եւ Ջախուն (Իրան) (էջ 502): Մրհան, անշուշտ, Ուրֆան է, որ սակայն այս շրջանին երբեք պարսիկներու ձեռքը եղած չէ:
- 13 Միջնադարուն, եւ գոնէ մինչեւ ԺԷ. դար, Սպանիոյ Սանթիակո տէ Գոմփոստելա ժամանող հայ ուխտաւորները իրենց յատուկ հիւրանոցը ունէին քաղաքին մէջ եւ, ըստ սպանական այլ աղբիւրներու, իրաւունք ունէին հայկական Պատարագ մատուցանելու: Այս մասին տե՛ս մեր յօդուածը՝ An Overview of Armenian-Spanish Relations the Cilician Period, «Հանդէս Ամսօրեայ», 1-12, 1996:
- 14 «Կիրճիստան» անունի «Կիրճի» արմատը դարձած է վրացի թագաւորի պատուանունը:

ՀԱՅԵՐԻ ԲՆՕՐՐԱՆԸ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀ

Գաբրիելեան Հ. Կ.

Սոյն աշխատութեան նպատակն է ցոյց տալ՝ որն է Հայի Հայրենիքը, որոնք են նրա պատմական ու ժամանակակից անուանումները, նրա սահմանները, բնական Հարստութիւնները, միգրացիոն կեղծ տեսութեան հետեւանքները, հիմնաւորել Հայի տեղաբնիկ լինելու հանգամանքը:

1. Հայի հայրենիքը

Ոչ Հայկական աղբիւրներից «Բրոկհաուզ-Եֆրոն» հանրագիտարանը գրում է. «Հայաստանը տեղադրուած է ար. երկ. 55 եւ 67⁰-ի միջեւ (Ֆերրոյից Հաշուած) եւ 37,5-41,75⁰ հիւս. լայնութեան միջեւ: Նրա երկարութիւնը արեւմուտքից արեւելք հաւասար է 975-1065, իսկ լայնութիւնը՝ 525կմ. այն զբաղեցնում է 375 հազար քառ. կմ»:

Բրիտանական Հանրագիտարանը (The New Encyclopædia Britannica) առաջին հատորում գրում է, որ Հայաստանը լեռնային տարածութիւն է Թուրքիայի, Սովետական Միութեան եւ Իրանի տարածքում, այն ընդգրկում է 400 հազար քառ. կմ:

Խորհրդային Մեծ Հանրագիտարանը, որ հրատարակուել է Մոսկուայում (երրորդ հրատարակութիւն), երկրորդ հատորում գրում է. «Հայկական լեռնաշխարհը երեք առաջաւորասիական լեռնաշխարհներից մէկն է, գտնւում է գլխաւորապէս Թուրքիայում, մասնակիորէն ԽՍՀՄ-ում եւ Իրանում: Հայկական լեռնաշխարհի այն մասը, որ գտնւում է ԽՍՀՄ-ում (Անդրկովկասեան բարձրավանդակ), զբաղեցնում է ՀՍՀ տարածքը, վրացական

ԽՍՀ-ի Հարաւային եւ Ադրբեջանական ԽՍՀ-ի արեւմտեան մասը»: Բարձր մշակութային մակարդակ ունեցող երկրներում ամէնուր նման բնորոշումներ կան: Մինչեւ վերջերս հրատարակուած քարտէզներում խոշոր տառերով գրւում է «Արմենիա»:

Առաջին համաշխարհային պատերազմից յետոյ, ապա Անդրկովկասում խորհրդային կարգեր հաստատուելու ընթացքում «Հայաստան» ընդհանուր անունը կրող երկիրը բաժանուց եւ Հային մնաց նրա բնօրրանի մի փոքրիկ բեկորը, Հայկական լեռնաշխարհի տարածքի միայն 7-8%-ը՝ 29,8 հազ. քառ. կմ:

Լեռնաշխարհի արեւմտեան մասում, որին յաճախ Արեւմտեան Հայաստան էին անուանում, մինչեւ 1915 թուականը ապրում էին Հայեր եւ շատ շրջաններում նրանք բնակչութեան մեծամասնութիւնն էին կազմում: Այստեղ առ այսօր պահպանուել են հազարամեակների ընթացքում կառուցած Հայկական եկեղեցիները, բերդերը, կամուրջները եւ Հայի ձեռքով կերտած ճարտարապետական այլ յուշարձաններ: Առաջին համաշխարհային պատերազմի աւարտին յաղթանակած արեւմտեան զօրեղ պետութիւնների անտարբերութեան հետեւանքով այդ ամբողջ տարածքը մնաց Թուրքիային, եւ ամբողջ աշխարհին յայտնի է, թէ ինչու այնտեղ այլեւս ոչ մի Հայ չկայ:

Արեւելեան Հայաստանում էլ (նախկին Ռուսական կայսրութեան սահմաններում) խորհրդային կարգեր հաստատուելուց յետոյ Ռուսաստանը Հայաստանի տարածքի մի մասը զիջեց Թուրքիային

(Կարսի մարզը, Արդահանը, Սուրմալուն), հայաբնակ Ջալախքը թողեց Վրաստանի կազմում, Նախիջևեանը եւ Արցախը յանձնեց Ադրբեջանին: Հային մնաց մի բուռ հող...:

Անցած խորհրդային տարիներին Ադրբեջանի դեկավար այրերին յաջողուեց հայաթափ անել Նախիջևեանի ինքնավար հանրապետութիւնը: Առաջ այնտեղ բնակչութեան կէսից աւելին հայեր էին. ներկայումս այնտեղ այլեւս հայ չկայ: Նոյն քաղաքականութիւնը տարւում էր Ղարաբաղի ինքնավար մարզում, սակայն զարաբաղցիները իրենց մէջ ուժ գտան դիմակայելու եւ տարածքը դարձնելու անկախ հանրապետութիւն:

Ինչպէս բոլորին յայտնի է, 11-րդ դարում Միջին Ասիայից սելջուկ-թիւրքերը ասպատակեցին Հայոց աշխարհը, սարսափելի կոտորածներ տեղի ունեցան: Դրանից յետոյ էլ վաչկատուն բազմաթիւ մահամեղական ցեղեր անխնայ կոտորում էին հայերին: Չորս դար անընդմէջ Հայոց աշխարհի մեծ մասը Օսմանեան կայսրութեան լծի տակ էր: Այդ ընթացքում բոլոր հայկական տեղանունները փոխուեցին թուրքականի: Նեկայումս ադրբեջանական «գիտնականները» թուրքական տեղանունները փաստարկ բերելով «ապացուցում» են, որ Հայաստանի ամբողջ տարածքը իրենցն է:

2. Հայոց աշխարհի անուանումները:

Անցած տեղաբնիկներն ու օտարները Հայոց երկիրը տարբեր կերպ են անուանել՝ Հայասա, Նաիրի երկիր, Աշխարհ Հայոց, Մեծ Հայք, Փոքր Հայք, Արմենիա, Հայոց բնաշխարհ, Ուրարտու, Երկիր Արարատեան, Հայաստան, Էրմէնիստան, Սոմեխի, Հայկական լեռնաշխարհ: Վերջին տարիներս յայտնաբերուել է նաեւ

երկրի ամենահին անուանումներից մէկը՝ Արատտա:

«Հայասա» անուանումը յայտնի դարձաւ միայն 20-րդ դարում: Թուրքիայի Կայսերի վիլայեթում շինարարական աշխատանքներ կատարելիս Բողազ-Քեոյի մօտ պատահականօրէն յայտնաբերուեց խեթական պետութեան արխիւը՝ հազարաւոր կաէ տախտակների վերայ: Յայտնի է, որ այդ պետութիւնը տեղադրուած է եղել Փոքրասիական սարահարթում՝ Եփրատ գետից արեւմուտք եւ թուրքերում է Ք. ա. 18-12 դդ.:

Է. Տորրերը 1927 թ. "Caucasica" ամսագրում հրատարակեց "Hajassa-Azzi" յօդուածը, որտեղ վերծանուած են խեթական արձանագրութիւնների այն մասերը, որոնք վերաբերում են հայկական Հայասա պետութեանը, նրա հետ ունեցած յարաբերութիւններին: Նկարագրուած են ռազմական գործողութիւններ, խաղաղութեան համաձայնագրեր, նոյնիսկ խեթական եւ հայկական թագաւորների միմեանց հարսնացու տալու արարողութիւններ: Յայտնի դարձաւ, որ երկրորդ հազարամեակի կէսերին (Ք. ա.) գոյութիւն է ունեցել հայկական պետականութիւն: Յայտնաբերուած նիւթերի հիման վրայ Գ. Ղափանցեանը 1947 թ. հրատարակեց «Хайаса - колыбель армян» մենագրութիւնը: Լեզուաբաններն էլ պարզեցին, որ «Հայասա» անուան «ասա» վերջաւորութիւնը խեթերէն նշանակում է ապրելու վայր: Այստեղից մի շարք գիտնականներ յանգում են այն եզրակացութեան, որ հայի անունը ծագում է երկրի անունից, միւսները հակառակը՝ երկիրն է կրում հայի անունը:

Ուրեմն յիշենք, որ հայի անունը գոյութիւն է ունեցել Ք. ա. երկրորդ հազարամեակի կէսերին: Այս հանգամանքը շատ

կարեւոր է մեր հետագայ շարադրանքում:

«Երկիր Նաիրի» անուանումը հանդիպում է ասորեստանեան արձանագրութիւններում Ք. ա. 13-րդ դարի կէսերին: Այդ անուամբ էր արտայայտուած Տաւրոսից հիւսիս ընկած Եփրատի եւ Արածանիի աւազանների տարածքը, Վանի թագաւորութիւնը: Վանայ լիճը կոչւում էր Նաիրի երկիր ծով:

Նաիրի երկիր նշանակում է հրոյ երկիր: Բանն այն է, որ Հայկական լեռնաշխարհում շատ են հրաբխային ծածկոյթները, եւ առաջներում տեղի են ունեցել հրաբխային արտավիժումներ: Հնարաւոր է, որ Նեմրուժը, Թոնդրակը շատ առաջ ներում հուր են ժայթքել, ուստի երկրի հարաւային հարեւանները այդ հիման վրայ երկիրն անուանել են Հրոյ երկիր՝ Երկիր Նաիրի:

9-րդ դարում (Ք. ա.) Նաիրի երկրների ցեղակցական կապերի հիման վրայ ձեւաւորուեց Վանի թագաւորութիւնը՝ Ուրարտու (Արարատեան) պետութիւնը, որի միապետը կրել է նաեւ «Նաիրի երկրի թագաւոր» տիտղոսը: Ուրեմն Նաիրին Հայաստան աշխարհի անուանումներից մէկն է:

Ինչ վերաբերում է Ուրարտուին, ապա դա Արարատեանի աղաւաղուած ձեւն է, որ գործածում էին Ասորեստանում Ք. ա. 1-ին հազարամեակի սկզբներին եւ կէսերին: Ուրարտուին անուանում են նաեւ Բիայնա կամ Բիայնիլի: Սա պետութեան կենտրոնական (հաւանաբար) արքայական տիրոյթի անունն է, որ երբեմն տարածում էին ամբողջ երկրի վրայ:

«Մեծ Հայք», «Փոքր Հայք» անուանումները շատ գործածական էին միջին դարերում: «Հայք» բառի վերջին «ք»-ն յոգնակի թիւ է ցոյց տալիս: Մեծ Հայքը

ըստ 7-րդ դարի «Աշխարհացոյցի» ընդգրկում էր 15 աշխարհ (ներկայումս՝ նահանգ իմաստով), տարածուած էր Եփրատի հովտից մինչեւ Կասպից ծով: Փոքր Հայքն ընկած էր Մեծ Հայքից արեւմուտք եւ ընդգրկում էր չորս աշխարհ:

Ըստ աւանդութեան Հայք անունը ծագում է Հայկի անունից (Մ. Խորենացի) եւ հայ ժողովրդի ինքնանուանումն է, որտեղից էր՝ Հայկազունիք, Հայկազարմ, Հայկազեանք: Հայկական լեռնաշխարհի բնիկները իրենց համարելով Հայկ նախահայր-աստուածութեան սերունդը, նրա անունով էլ կոչուել են Հայկազուններ: Այստեղից էլ ծագում է «Հայաստան» անուանումը: Բառի վերջին «ստան» անուանումը իրանական ծագում ունի եւ նշանակում է ապրելու վայր (օրինակ՝ Ջինասկում, Հնդկաստան, Ռուսաստան եւ այլն):

«Հայ» անուան բազմաթիւ այլ մեկնաբանութիւններ կան (Գ. Ենսէն, Շաիրաբեկ, Յ. Կիպպեր, Գ. Ղափանցեան, Ի. Դեակոնով, Ա. Խաչատրեան, Գ. Ջահուկեան, Յ. Կարապետեան, Լ. Շահինեան, Ռ. Իշխանեան, Ա. Վարպետեան եւ ուրիշներ):

Մէկ նոր տեսակէտ յայտնում է Ա. Վարպետեանը (1990). նա գրում է, որ Հայաստանի կենտրոնում ապրել են Ար կոչուող ցեղերը, երկիրը կոչուել է Հայք: Ար արմատից ծագել են շատ հայկական տեղանուններ՝ Արարատ, Արագած եւ այլն: Ուրեմն նա «Հայ» անունը բխցնում է Ար կամ Արա աստուածութիւնից: Ստացւում է այնպէս, որ ի վերջոյ թէ՛ Հայաստան եւ թէ՛ Արմենիա անուանումները միեւնոյն աստուածութիւնից են:

Կարելի է ուրիշ տեսակէտներ էլ բերել, սակայն մեր խնդիրը չէ «Հայ» անուան ստուգաբանութիւնը. կարեւորը մեզ

համար այն է, որ այդ անուր գալիս է ան-
յիշելի ժամանակներից եւ տեղական ծա-
գում ունի: Ինչպէս էլ հեղինակները վեր-
լուծում են անուան ծագումը, միեւնոյն,
է այն եղել է շատ աւելի վաղ, քան հա-
յերի եկուորութեան վարկածում նշուող
ժամանակաշրջանը, որի մասին կը խոսու-
ւի ստորեւ:

«Արմենիա» անուանումը ըստ աւան-
դութեան ծագում է Արամ անունից: Ա-
րամը Նոյի զաւակ Հաբեթի սերնդից էր,
որն ընդարձակեց Հայաստանի սահման-
ները: Հէնց նրա անունով էլ օտարները
երկիրն անուանում են Արմենիա: Հայ
մատենագիրները շատ դէպքերում «Հա-
յաստան» անուան փոխարէն օգտագոր-
ծում էին Արմէնական տուն, Արամէական
ազգ արտայայտութիւնները:

Մի շարք հեղինակներ, ինչպէս օրի-
նակ Գ. Ղափանցեանը, Բ. Պիտրովսկին,
Բ. Առաքելեանը եւ ուրիշներ, գտնում են,
որ հայ ժողովրդի կազմաւորման գործում
վճռական դեր են խաղացել երկու խոշոր
ցեղախմբեր՝ մէկը Հայասա, միւսը Հայ-
կական լեռնաշխարհի հարաւ-արեւմուտ-
քում՝ Արմէնա-Արմէ ցեղախմբերը, որտե-
ղից էլ ծագել է Արմենիա անունը:

Առաջին անգամ Արմենիա անուան
գրութիւնը հանդիպում է Ք. ա. 6-րդ դա-
րի Աքեմէնեան Պարսկաստանի թագաւոր
Դարեհ 1-ի կողմից ստեղծուած Բագաս-
թանայի (Բիհիստուն) եռալեզու արձա-
նագրութեան մէջ, որտեղ երեք տարբեր
լեզուներով նոյն տեքստն է կարդացւում:
Էլամերէնում եւ աքքադերէնում գրուած
է Ուրարտու, իսկ հին պարսկական տեքս-
տում՝ Արմենիա: Այդ ցոյց է տալիս, որ
Ուրարտուն եւ Արմենիան նոյն երկրի ա-
նուանումներն են: Նոյն այդ դարում
յոյն քարտէզագիր Հեկատէոս Մելետացին
կազմում է այն ժամանակուայ յայտնի

աշխարհի քարտէզ եւ այնտեղ նշում
Արմենիան: Սրանք գրաւոր յիշատակու-
թիւններն են, բայց բանաւոր եւ աւան-
դական յիշատակութիւնները գալիս են
շատ հեռուից՝ աւելի հին ժամանակներից:
Ժողովրդի բերանում հազարամեակներ
շարունակ հոլովուել են Արմէն, Արման,
Արմանի անունները եւ երկրի անուա-
նումները: Օրինակ՝ Աքքադի թագաւոր
Նարամսինը դեռեւս 23-րդ դարում Ք. ա.
կաւէ տախտակների վրայ թողել է արձա-
նագրութիւններ, որտեղ խօսուում է Ար-
մանի երկրի մասին:

Սոմխեթի անուանումը վրացական է.
այդպէս են անուանում Հայաստանը:
Թուրքերը եւ Ադրբեջանի թուրքերը գոր-
ծածում են էրմէնիստան անուանումը,
ընդ որում հասկանում են միայն այժ-
մեան ՀՀ տարածքը: Նրանք Հայկական
լեռնաշխարհը վերանուանել են Արեւե-
լեան Անատոլիա (Անադոլու), եւ երբ
խօսք է լինում այդ լեռնաշխարհի մասին,
այդ պատկերացում են միայն ՀՀ սահ-
մաններում:

«Հայկական լեռնաշխարհ» անուա-
նումը գործածական դարձաւ սկսած 19-
րդ դարից եւ յաճախ օգտագործւում է
Հայաստանի փոխարէն: Բանն այն է, որ
«Հայաստան» անուանումը, որ առաջնե-
րում ճշգրիտ արտայայտում էր երկրի
տարածքը, ներկայումս ունի մի քանի ի-
մաստ՝ ցոյց է տալիս էթնիկական պատ-
կանելութիւն, պետութեան տարածք, ֆի-
զիկաաշխարհագրական մարզ եւ այլն: Օ-
րինակ՝ պատմական Հայաստանը Ք. ա. 1-
ին դարում տարածւում էր Կովկասեան
լեռներից մինչեւ Միջերկրական ծով
(Տիգրան Մեծի օրօք), ներկայումս՝ 29,8
հազ. քառ. կմ: Դրանցից ո՞րն է իրական
Հայաստանը: Ինչպէս նկատում է ընթեր-
ցողը, քաղաքական առումով նրա սահ-

մանները շատ երբերուն են, եւ եթէ ժամա-
նակաշրջանը չնշուի, չի իմացուի ինչ
տարածքի մասին է խօսքը: Միանգամայն
իրաւացի է Արշակ Ալպոյաճեանը (1950),
երբ գրում է. «Դժբախտաբար Հայաստան
որոշ սահմաններ ունեցող երկիր մը չէ,
եւ այդ սահմանները գծելու փորձը գերծ
չէ դժուարութիւնների, քանի որ ասիկայ
կապ ունի շատ մը աշխարհագրական, ցե-
ղագրական, հնախօսական, պատմական
առաւել կամ նուազ վիճելու հարցերու
հետ» (էջ 1):

«Հայկական լեռնաշխարհ» անուա-
նումը ծագումնաբանօրէն ֆիզիկաաշ-
խարհագրական իմաստ ունի եւ գերծ է
քաղաքական, էթնիկական, պատմական,
հնագիտական եւ այլ փոփոխական
յատկանիշներ ունեցող անուանումներից
եւ ամենից լաւ է արտայայտում երկրի
տարածքի էութիւնը, այն է՝ որպէս լեռ-
նային աշխարհի Ալպ-Հիմալայեան լեռ-
նային համակարգում, միեւնոյն ժամա-
նակ ցոյց է տալիս նրա էթնիկական
պատկանելութիւնը՝ մի տարածք, որի
վրայ ծագել ու ձեւաւորուել է հայ ժողո-
վուրդը:

Ներկայումս գործածական է նաեւ
«Պատմական Հայաստան» անուանումը,
որպէսզի չչփոթենք այն ներկայիս տա-
րածքի հետ: Այն օգտագործելիս պէտք է
անպայման դարաշրջանը նշել, որից էլ
արդէն պարզ են դառնում Հայաստանի
սահմանները տուեալ ժամանակի հատու-
ածում:

Պատմական Հայաստանի մէջ են՝ Մեծ
Հայքը, Փոքր Հայքը, Հայկական Միջա-
գետքը, Մարաց ամուր աշխարհը, Ատր-
պատականի արեւմտեան հատուածը եւ
Կիլիկիան: Վերջինս տարածքային առու-
մով Հայկական լեռնաշխարհից դուրս է,
բայց այնտեղ երեք դար շարունակ գո-

յութիւն է ունեցել Հայկական թագաւոր-
ութիւն, ունեցել է զարգացած մշակոյթ:

Տառացիօրէն վերջերս Արտակ Մովսի-
սեանը (1992) մանրամասն ու բազմակող-
մանիօրէն ուսումնասիրելով շուամերական
քաղաքակրթութեան գրական ժառանգու-
թիւնը (կաւէ սալիկների վրայ), այնտեղ
գտել է Արատտա երկրի մասին յիշատա-
կութիւններ եւ ապացուցում է, որ այդ
երկիրը հէնց ինքը՝ Հայկական լեռնաշ-
խարհն է: Այն գոյութիւն է ունեցել Ք.
ա. 28-27 դարերում, յայտնի է եղել զար-
գացած մշակոյթով, սերտ յարաբերու-
թիւններ է ունեցել շուամերների հետ:
Ստացւում է, որ Հայկական լեռնաշխար-
հում պետականութեան սաղմեր գոյու-
թիւն են ունեցել մեզանից շուրջ 4,5-5
հազարամեակ առաջ:

Ամփոփելով անուանումների բաժինը՝
նշենք, որ ներկայումս Հայոց աշխարհի
ամենադիպուկ եւ կայուն գործօններով
պայմանաւորուած անուանումը «Հայկա-
կան լեռնաշխարհ» անուանումն է, եր-
կիր, որը իր աշխարհագրական ընդլայնով
տարբերում է հարեւան Փոքրասիական
եւ Իրանական սարահարթերից, հիւսիսում
գտնուող Սեւ ծովի գոգաւորութիւնից,
հարաւում տեղադրուած Միջագետքի՝
ծագումով խիստ տարբեր դաշտավայրից:

3. Սահմանները, բնութիւնը, Ռարստութիւնները:

Հայոց աշխարհը աշխարհագրական
միջին լայնութիւններում է՝ հասարակա-
ծից ու հիւսիսային բեւեռից գրեթէ հա-
ւասար հեռաւորութեան վրայ: Նրա բնու-
թիւնը խիստ բազմազան է վերընթաց գո-
տիականութեան շնորհիւ, երկիրն էլ որ-
պէս լեռնային երկիր հարուստ է հանա-
ծոյ հարստութիւններով, եւ պատահական
չէ, որ պղծի, բրոնզի, երկաթի ձուլման է-
պիկներուն է եղել: Բազմազան լանդ-

շաֆտների առկայութեան պայմաններում տնտեսութեան բազմազան ճիւղեր են զարգացել: Պատահական չէ նաեւ այն, որ այս երկիրը դարեր շարունակ աշխարհակալ պետութիւնների արանքում պատերազմների թատերաբեմ է եղել:

Ուրեմն ամենասեղմ ձեւով ներկայացնենք Հայկական լեռնաշխարհի սահմանները, բնութեան առանձնատկութիւնները: Այս առանձնատկութիւնները կարեւոր խթան են դարձել հայի հաւաքական հոգեբանութեան ձեւաւորման գործում: Առաջին հերթին նշենք սահմանները (նկ. 1):

Հայկական լեռնաշխարհը հիւսիսից եզերւում է Սեւ ծովով եւ Կովսիսի դաշտավայրով: Այստեղ Պոնտական լեռները, որ ձգւում են ծովափին զուգահեռ, միանգամայն տարբերւում են Սեւ ծովի գոգաւորութիւնից թէ՛ ծագումով, թէ՛ լեռնագրութեամբ: Արեւելքում սահմանն անցնում է Փոքր Կովկասի լեռնային համակարգի ստորոտներով, որտեղից դէպի արեւելք տարածւում է Կուր-Արաքսեան դաշտավայրը, որը նոյնպէս ծագումով միանգամայն այլ է: Հարաւային սահմանը անցնում է Հայկական Տաւրոս լեռնային համակարգի ստորոտներով, որտեղից հարաւ տարածւում է Միջագետքի բոլորովին այլ ծագումի դաշտավայրը: Այստեղ Տիգրիսի լայնարձակ հովիտ-դաշտն է, որտեղ մի ժամանակ ապրել են միայն հայեր, այստեղ է Տիգրան Մեծը կառուցել Տիգրանակերտ մայրաքաղաքը: Արեւմտեան սահմանը անցնում է Եփրատ եւ Հալիս (Կղզի-Իրմակ) գետերի ջրբաժանով՝ Թեջերի լեռնաշխարհով, այնուհետեւ սահմանը իջնում է Սեւ ծով: Նշուած սահմաններում Հայկական լեռնաշխարհի տարածքը կազմում է 375-400 հազար քառ. կմ:

Հայկական լեռնաշխարհը շրջապատի տարածքների նկատմամբ ունի ուրոյն առանձնատկութիւն, որը հայ շինականի կողմից հազարաւոր տարիների ընթացքում հաշուի է առնուել. հայը կարողացել է յարմարուել բարդ բնութեանը, շատ դէպքերում խելացի ձեւով ստեղծել մարդածին-անթրոպոգէն լանդշաֆտներ:

Լեռնային այս երկրի առաջացումը կապւում է երկրակեղեւի միլիոնաւոր տարիների տեկտոնական շարժումների հետ: Շուրջ 200 միլիոն տարի առաջ լեռնաշխարհի տեղում ծով էր: Պիրենեան թերակղզուց մինչեւ Մալայեան կղզիախումբ ձգւում էր Թետիս ովկիանոսը, որտեղ կուտակւում էին հիւսիսից ու հարաւից տեղատարուած նիւթերը, առաջացնելով հզօր ծովային նստուածքներ: Ահա Արաբական թերակղզին պոկւում է Աֆրիկայից եւ դանդաղ, տարեկան 3-4սմ արագութեամբ շարժւում է հիւսիս՝ ճգմելով Հայկական լեռնաշխարհի հատուածը եւ այսպէս, անցած միլիոնաւոր տարիների ընթացքում, Հայկական լեռնաշխարհի տեղում երկրակեղեւը ծալքաւորւում է ու դուրս գալիս ծովի յատակից՝ հասնելով 1850մ միջին բարձրութեան: Հարեւան բարձրավանդակներից այն բարձր է առնուազն 600-800մ եւ ներկայացնում է լեռնային կղզի: Հէնց այդպէս էլ եւրոպական գիտնականները Հայկական լեռնաշխարհը համարում են լեռնային կղզի (Berginsel): Ուրեմն նրա բարձրադիր լեռնային բնոյթը կարեւոր առանձնատկութիւններից մէկն է: Լեռներն այստեղ ունեն մինչեւ 4-5կմ բարձրութիւն, նրանց միջեւ ստեղծուել են անդնդախոր կիրճեր: Սրանց յատակը որոշ տեղերում հարթ դաշտեր են ներկայացնում, որտեղ դարեր շարունակ հայ շինականը զբաղուել է երկրագործութեամբ, արհեստներով,

այստեղ են հիմնուել քաղաքներն ու բնակավայրերը, խոշոր հովիտներում է զարգացել մշակոյթը:

Հայկական լեռնաշխարհը ամէն կողմից շրջապատուած է բարձրաբերձ լեռներով: Ինչպէս Գեւորգ Մեսրոպն է գրում (1919), «լեռնաշխարհը կը նմանի բերդաքաղաքի մը, որ պարիսպներով շրջապատուած է»: Հիւսիսում Պոնտոսի լեռնաշխարհն է Քաջքար գագաթով (3931մ), արեւելքում՝ Փոքր Կովկասի համակարգը՝ Կապուտշուղ, Մոււի եւ այլ գագաթներով, հարաւում՝ Հայկական Տաւրոսը Զիրլո (4168մ), Մարութայ եւ այլ գագաթներով, արեւմուտքում՝ Թեջերը:

Լեռնաշխարհի կենտրոնական մասով արեւմուտքից արեւելք անցնում է Ներքին Տաւրոսը, որի արեւելեան ծայրին բազմել է լեռնաշխարհի ամենաբարձր գագաթը՝ Մեծ Արարատ (Մասիս) յանգած հրաբուխը (5165մ):

Լեռնաշխարհի առանձնատկութիւններից մէկը հրաբխային ծածկոյթների առկայութիւնն է: Անցած միլիոնաւոր տարիների ընթացքում եղել են հրաբխային գործունէութեան մի շարք փուլեր: Երկրի խորքից հրաբխային լաւան դուրս ժայթքելով ծածկել է տասնեակ հազարաւոր քառ. կմ մակերեսով տարածքներ: Լեռնաշխարհի մօտ մէկ երրորդը լաւայածածկ է: Այժմ հրաբխային ժայթքումները դադարել են, սակայն ոչ վաղ անցալում դրանք գործել են, որոնց ակնատես են եղել մեր նախնիները: Ներկայումս գործող են համարւում Նեմրութը եւ Թոնդրակը՝ Վանայ լճի ափին, որոնք արտափիծում են գազեր ու ջրային գոլորշիներ: Հրաբխականութեան հետ են կապւում շատ հանքային հարստութիւններ, շինանիւթեր: Անյիշելի ժամանակներից հայրտիրապետել է քարամշակութեանը. բա-

զալտը, տուֆը, որ այնքան շատ են մեր հայրենիքում, դարձել են այն հիմքը, որի բազայի վրայ կերտուել են եկեղեցիներ, բերդեր, կամուրջներ ու այլ ճարտարապետական յուշարձաններ:

Երկրի ուղիղից բազմաբնոյթ կառուցուածքը հային ստիպել է լինել տոկուն, աշխատասէր, բնական աղէտներին դիմադրաւելու հմտութիւն ձեռք բերել: Նա կարողացել է բարձրաբերձ լեռնանցքերով ճանապարհներ անցկացնել, այդ լեռնանցքերը օգտագործել ուղղաւարական նպատակներով:

Լեռնային երկրի առանձնատկութիւններից մէկը լեռնալանջերի մեծ թեքութիւններն են: Թեք լանջերի վրայ վարուցանքը մեծ բարդութիւն կարող է առաջացնել: Եթէ վարը կատարւում է թեքութեան ուղղութեամբ, ապա կարճ ժամանակուայ ընթացքում հողի էրոզիան կարող է այնպիսի չափերի հասնել, որ հողաշերտն ամբողջովին լուացուի: Հազարաւոր տարիների փորձից ելնելով՝ հայը կարողացել է մշակել հորիզոնականների ուղղութեամբ (այսինքն՝ թեքութեանն ուղղահայեաց) մշակելու տեխնիկան եւ կանխել հողի էրոզիան: Մեծ թեքութեան լանջերի վրայ դարաւանդաւորում է կատարել եւ ամէնուրեք նկատում ենք անցեալից մնացած դարաւանդաւորուած լանջեր:

Տարբեր կողմնադրութեան լեռնալանջերին խոնաւութեան պայմանները նոյնը չեն: Հիւսիսահայեաց լանջերին խոնաւութիւնը երկար է պահպանւում, ուստի հայ շինականը կարողացել է տարբեր կուտուրաները տարբեր լեռնալանջերին մշակել:

Հայկական լեռնաշխարհում, որպէս երիտասարդ լեռնային երկիր, երկրակեղեւի տեկտոնական շարժումները բուռն

կերպով շարունակում են, որոնք երկրաշարժերի պատճառ են դառնում: Այնչի՜ շեղի ժամանակներից հայր աշխատել է յարմարուել բնական այդ արհաւիրքին, դարերի ընթացքում մշակել է բնակարանի կառուցման մի այնպիսի տիպ, որտեղ առաստաղը պատերի վրայ նստելուց բացի յենում է նաեւ պատերից 1-1,5մ հեռաւորութեան վրայ կանգնեցուած սիւնների վրայ: Բնակարանի այդ տիպը կոչւում է «գլխատուն»: Երկրաշարժի դէպքում եթէ պատերը քանդոււմ են, ապա սիւնները առաստաղը պահում են, զոհեր քիչ են լինում:

Երկրաշարժերը պատմական շրջանում անհամար աղէտներ են բերել հայերին, այդ մասին բազմաթիւ յիշատակութիւններ կան մագաղաթեայ մատեաններում: Սակայն զարմանալին այն է, որ հայը երբէք չի յուսահատուել, յամառօրէն վերակառուցել է աւերուած կառոյցները: Օրինակ՝ Երզնկա քաղաքը գտնուում է ակտիւ գործող տեկտոնական բեկուածքի վրայ, այստեղ յաճախակի են աւերիչ երկրաշարժերը: Պատմական տուեալներով քաղաքը 30 անգամ կործանուել է, ամէն անգամ հազարաւոր ու տասնեակ հազարաւոր զոհեր են եղել, բայց բնակիչները քաղաքը չեն լքել, նորից վերականգնել են աւերմունքը:

Հայկական լեռնաշխարհը գտնուում է մերձարեւադարձային գոտու չորային-կենտրոնական սեկտորում, որտեղի կլիմայական պայմանները կիսաանապատային կամ անապատային են, ինչպէս օրինակ Կուր-Արաքսեան դաշտավայրը (բացի Սեւ ծովի առափնեայ մասերից, որտեղ կլիման խոնաւ մերձարեւադարձային է՝ ամռանը 22-24⁰, ձմռանը զրոյից բարձր 4-7⁰, տեղումներն էլ շատ):

Հայկական լեռնաշխարհի լեռնային

բնոյթը իր կնիքն է դնում կլիմայի ձեւաւորման գործում, որտեղ ցածրադիր մասերում ամառը չոր ու շոգ է, ձմռանը չափազանց ցուրտ, իսկ բարձրադիր մասերում ամռանը մեղմ, ձմռանը՝ ցուրտ ու ձնառատ:

Յայտնի հողագէտ-լանդշաֆտագէտ Վ. Վ. Դոկուչանը երեք անգամ եղաւ Հայկական լեռնաշխարհում ու Կովկասում եւ այստեղի դիտարկումների հիման վրայ մշակեց զոնայականութեան եւ վերընթաց գօտիականութեան տեսութիւնը:

Միջնաշխարհում տիրապետող օդային զանգուածները բարեխառն են, ամռանը ներթափանցում են արեւադարձային չոր զանգուածները, ձմռանը՝ արկտիկական, ուստի որոշ շրջաններում լինում է այնքան ցուրտ, ինչպէս Սիբիրում:

Միջնաշխարհում հովիտներում ամռանը լինում է 24-28⁰, առաւելագոյնը՝ 42-44⁰, տեղումների քանակն էլ տարեկան 500-550մմ, ըստ բարձրութեան աւելանալով, հասնում է 1000մմ-ի: Ձմռանը ցուրտ է՝ -5-7⁰ ցածրադիր մասերում, բարձրադիր սարաւանդներում՝ 10-12⁰, երբեմն՝ 35⁰, Արփի լճի ափին նուազագոյնը եղել է 46⁰:

Ձմռանը լեռնաշխարհում ձիւն է գալիս եւ Միջնաշխարհում 1300մ-ից բարձր մասերում կայուն ձնածածկոյթ է հաստատուում, որը բարձր լեռներում տեւում է աւելի քան 6 ամիս, իսկ առանձին դագաթների վրայ ձիւնը պահպանւում է շուրջ տարի: Արարատի վրայ կան սառցադաշտեր: Հազարամեակների ընթացքում հայր կարողացել է ընտելանալ կլիմայական քմահաճոյքներին ու կազմակերպել իր տնտեսութիւնը:

Նշենք, որ կլիմայի առանձնայատկութիւններից կարեւորը բարձրադիր գօտիականութիւնն է: Գոգաւորութիւնների

յատակից մինչեւ լեռնագագաթները կլիման խստանում է, փոխւում են ջերմային ու խոնաւացման պայմանները, փոխւում են լանդշաֆտային գօտիները: Հազարամեակների ընթացքում մարդը կարողացել է ընկալել վերընթաց գօտիականութեան օրինաչափութիւնը եւ համապատասխանաբար ուսցիտնալ կերպով օգտագործել լանդշաֆտները:

Միջնաշխարհում վերընթաց գօտիները սրանք են՝ կիսաանապատի, չոր տափաստանի, տափաստանի, անտառային, մերձալպեան մարգագետինների, ալպեան մարգագետինների եւ մերձձնային լանդշաֆտներ: Ցածրադիր մասերում գոգաւորութիւնների յատակին մարդը զարգացրել է ջերմասէր կուլտուրաների մշակութիւնը, այգեգործութիւնը: Միջին բարձրութեան լեռների գօտիում, որտեղ տափաստաններ են, մշակել է հացահատիկ-դիմացկուն ծառատեսակներ: Ալպեան ու մերձալպեան մարգագետիններում զբաղուել է անասնաբուծութեամբ: Գարնանը ձիւնը դիմացկուն բարձրացել են լեռները, հասել ձնամերձ գօտուն, այստեղ թողել հազարաւոր ժայռանկարներ: Հայր իր մշտական բնակավայրը հասցրել է մինչեւ 2000-2400մ բարձրութեան (հարաւում):

Հայկական լեռնաշխարհը բնական ջրերով հարուստ երկիր է (բացառութեամբ սեւ ծովի առափնեայ մասերի): Այստեղ տարեկան տեղումների ընդհանուր ծաւալը կազմում է 220 խր.կմ, որի մեծ մասը գոլորշիանում է, գետերը տանում են 90 խր.կմ: Գլխաւոր գետերն են Եփրատը՝ Արածանի վտակով, Տիգրիսը, Ճորոխը, Կուրը, Արաքսը: Հոսուն լիճ է Սեւանը, անհոս են Վանայ լիճը եւ Ուրմիան, որոնց մէջ թափուող գետերի ջուրը ամբողջովին գոլորշիանում է:

Լեռնաշխարհում ցածրադիր մասերում նկատուում է ջրի պակասորդ, յատկապէս ամառային ամիսներին: Գոլորկացման ունակութիւնը եռակի ու քառակի աւելին է, քան տեղումների քանակը: Այս հանգամանքը ժամանակին ընկալուել է հայերի կողմից, եւ նրանք մշակել են ջրամատակարարման բաւական բարդ համակարգեր: Եւրոպական հնագէտների վկայութեամբ քեհհրիզների (ստորգետնեայ ջրատարների) գիւտը հայերին է պատկանում, այն այնուհետեւ անցել է պարսիկներին: Ստորգետնեայ թունելները տասնեակ կիլոմետրերով ձգուել են հարթ դաշտերի տակով եւ ջուր հասցրել չորային բնակավայրերին: Մինչեւ 20-րդ դարը Գիւմրիում դեռեւս գործում էր քեհհրիզներ կառուցող վարպետների համալսարանը: Այժմ էլ այդ քաղաքում կան աղբիւրներ, որոնց ջուրը գալիս է Շիրակի լեռներից՝ քեհհրիզներով:

Հայկական լեռնաշխարհի գետերը ունեն մեծ անկում եւ սահանքաւոր են: Այդ հանգամանքը օգտագործել են հայերը, եւ ջրաղացների գիւտը հայերին է պատկանում: Լեռնաշխարհի հրաբխային շրջաններում կան յորդաբուխ աղբիւրներ, որ ծալքաբեկորաւոր լեռներում շատ քիչ են: Բանն այն է, որ բազալտային լաւան սառչելիս առաջացնում է ճեղքեր: Ջուրը սառչելով այդ ճեղքերի մէջ լայնացնում է ճեղքերը, եւ որոշ ժամանակ անց լաւային դաշտը վերածուում է քառակարկանների (չինգիլներ), որոնք մթնոլորտային տեղումները ամբողջութեամբ ներծծում են եւ սնում ստորերկրեայ ջրերին: Այս ջրերը աշխարհի լաւագոյն ջրերի շարքում են եւ լայնօրէն օգտագործուում են տնտեսութեան ամենատարբեր կարիքների համար: Լեռնաշխարհը հարուստ է արտեզեան ջրերով: Ամենախոշոր աւազա-

նը Արարատեանն է, որտեղ փորուած են հազարաւոր հորատանցքեր, եւ ջրերը օգտագործուած են ոռոգման ու կենցաղային կարիքների համար:

Հայկական լեռնաշխարհը հարուստ է հանքային ջրերով: Դրանք մշտապէս օգտագործուել են զանազան հիւանդութիւններ բուժելու համար եւ համարուել են սուրբ ջուր: Այդպիսի աղբիւրներ կան Կարինի շրջանում (Շամբ Կարնոյ), Երզնկայի աղբիւրները (որոնց մասին գովեստով է խօսում Մարկո Պոլոն), Վարշակի աղբիւրները Արածանի աւազանում, աղբիւրներ Տիգրիսի վերին հոսանքների շրջանում, Ուրմիա լճի աւազանում: Անդրկովկասում՝ Բորժոմ, Արզնի, Հանքաւան, Զերմուկ, Իստի-սու եւ այլն:

Հայկական լեռնաշխարհի լեռնային ուղիների պայմաններում յաճախ են հանդիպում մետաղային հանածոյ հարստութիւններ: Շատ են հրաբխային ներծայթուկները: Հրաբխային մագման չի կարողացել պատուել երկրակեղեւը եւ դուրս գալ երկրի մակերեւոյթ, սառել է խորքում, որոնք պարունակում են մետաղային հարստութիւններ: Յատկապէս երկիրը հարուստ է գունաւոր մետաղներով՝ պղնձով, բազմամետաղներով, մոլիբդէնով, որոշ հատուածներում էլ՝ երկաթով: Յայտնի պղնձահանքեր կան Ճորոխի աւազանում (Գիւմուշխանէ), Տաւրոսի համակարգում (էրզանի, Մաղէն) Դեբեդի աւազանում (Ալաւերդի, Շամլուղ), Ողջի գետի աւազանում (Կապան, Քաջարան), Արաքսի ափին (Ագարակ) եւ այլն: Այս հանքերի առկայութեամբ է պայմանաւորուած պղնձի, ապա բրոնզի ձուլման գիւտը Հայոց լեռնաշխարհում:

Երկաթի հանքավայրեր կան Փոքր Կովկասում (Դաշքեսան), Զանգեզուրում (Սևարանց), Արեւմտեան Հայաստանում

Սիւասի մօտերքում եւ այլն: Պարզուել է, որ ժամանակին հայերը մետաղ են արտահանել դէպի Եգիպտոս ու Շումերիա:

Լեռնաշխարհում կան նաեւ գորշ ածխի պաշարներ, նաւթի ու գազի երեւակումներ: Հանքային հարստութիւնների մէջ հայր մեծ չափով մշակել է հրաբխային ծագման շինանիւթերը՝ բազալտը, տարբեր գոյնի տուֆերը, տրաւերտինը, խարամը, աւազը եւ այլն: Շինարարական արուեստը զարգացել էր այն աստիճան, որ մեր վարպետներին հրաւիրում էին արտասահման՝ կարեւորագոյն օբյեկտների շինարարութեանը մասնակցելու համար: Երբ այժմ զբօսաշրջիկները այցելում են միջնադարեան մայրաքաղաք Անիի աւերակները, Աղթամարի Սուրբ խաչ եկեղեցին եւ այլ կառոյցներ, զարմանում են քարամշակ վարպետների արուեստի կատարելութեամբ:

Հայկական լեռնաշխարհում կան այլ հանքային հարստութիւններ՝ կերակրի աղ, բարիտ, կրաքար, կիսաթանկարժէք քարեր եւ այլն. սրանք ժամանակին օգտագործուել են հայի կողմից:

4. Հայկական լեռնաշխարհը՝ հայերի բնօրրան:

Անուանի մարդաբաններ Լուշանը, Շանտրը, Վիրխովը, Պանտիւկովը, Անուչինը եւ ուրիշներ հաստատում են, որ Հայկական լեռնաշխարհում տեղաբնիկ են արմէնոիդ-հայկերպար ցեղերը: Այդ կերպարը բնորոշում է կարճ եւ կլոր գանգով, ուղիղ, լայն եւ միջին բարձրութեան ճակատով, չափաւոր մեծութեան դէմքով, երկար ու կլոր քթով, լայն ու թուխ (սակաւադէպ՝ ծաւի), առաւել սակաւ՝ կապոյտ աչքերով, երկար արտեւանունքով, թաւ յօնքերով, խիտ եւ թուխ (սակաւադէպ՝ խարտեաշ) մազերով, սպիտակ (սակաւադէպ՝ թուխ) մաշկով: Այս

կերպարը ներկայումս հայն է:

Վ. Վ. Բուենակը (1927) դեռեւս 1927 թուականին գրում էր. «Արմէնոիդ տիպը յայտնի է ամենահին ժամանակներից եւ ունի լայն տարածում Միջագետքի բոլոր մարզերում՝ սկսած նրա հարաւային մասից մինչեւ Տիգրիսի ու Եփրատի վերնագաւառները եւ աւելի արեւմուտք մինչեւ Անատոլիական թերակղզու արեւմտեան ծայրը՝ մի կողմից, եւ մինչեւ Իրանի ներքին շրջանները՝ միւս կողմից: Առաջաւոր Ասիայի բնակչութեան մէջ ոչ մէկ այլ ռասայական էլեմենտ չի կարելի արձանագրել: Այս տիպի ձեւաւորումը անարտուցելի մինչեւ եւրոպացիների, ասիացիների ցեղախմբերի՝ թրակիացիների, հելլենների, թուրքերի ի յայտ գալը, որոնք, հաւանաբար, էական ազդեցութիւն չեն թողել բնակչութեան մարդաբանական տիպի վրայ, լուծուել են հաստատական մօրէն ձեւաւորուած արմէնոիդ ռասայի մէջ»: (էջ 263): Նման եզրակացութեան նա յանգեց հնագիտական հարուստ նիւթերի հիման վրայ:

Այս նոյն տեսութիւնը հաստատում է Ն. Յ. Քոչարը (1989) դերմատոլոգիկայի անժխտելի նիւթերի հիման վրայ: Նա մանրազնին ուսումնասիրելով հայերի ձեւաւորմանը ու ձեւի ափերի ծալքերը, իր գրքում յատուկ գլուխ է նուիրել հայերի պոպուլեացիոն-ծագումնաբանական անալիզին եւ հարուստ փաստացի նիւթերի հիման վրայ գալիս է այն եզրակացութեան, որ արմէնոիդի մարդաբանական յատկանիշների համալիրը, ըստ դերմատոլոգիկայի, ձեւաւորուել է 8-9 հազար տարի առաջ՝ նէոլիթում՝ Հայկական լեռնաշխարհի տարածքում, որն այնուհետեւ տարածուել է Առաջաւոր Ասիայում ու Կովկասում: Հետագայում մենք կը տեսնենք, որ նոյն եզրակացում

թեանը յանգեցին Տ. Գամկրելիձէն, Վ. Իւանովը (1984) եւ ուրիշներ:

Դեռեւս նէոլիթում, երբ մարդն արդէն անցել էր նստակեաց կեանքի, մեզանից 7-8 հազար տարի առաջ Հայկական լեռնաշխարհում ու Փոքր Ասիայում ապրող ցեղերը հաղորդակցուած էին նոր ձեւաւորուող հնդեւրոպական նախալեզուով: Այդ ժամանակուանից սկսում են ցեղերի կենտրոնախոյզ ձգտումները: Նրանք շարժուած են դէպի Միջերկրական ծով, Եւրոպա, Իրան, Միջին Ասիա, մինչեւ Հնդկաստան: Տեղում մնում են խեթերը, հայերը, յոյները, իրանեան ցեղերը: Եւ այսպէս՝ Հայկական էթնոսի ձեւաւորումը, ձեւաւորման տնտեսական նախադրեալները ստեղծուել էին էնէոլիթի (պղնձաքարի) ժամանակաշրջանում: Հայի մշակոյթը քայլ առ քայլ, առանց ընդմիջման զարգացել ու հասել է մեզ:

Հնդեւրոպական նախալեզուի հայրենիքը Հայկական լեռնաշխարհն ու Փոքր Ասիան են, եւ պատահական չէ, որ այդ նախահայրենիքը աշխարհագրական միջին լայնութիւններում է: Բնական բարենպաստ պայմանները, հանքային հարստութիւնները, լանդշաֆտների բազմազանութիւնը լուրջ նախադրեալներ էին մշակոյթի զարգացման գործում: Պատահական չէ, որ հանքաքարից պղնձի, բրոնզի, երկաթի ձուլման գիւտի հպիկենտրոնը Հայկական լեռնաշխարհն է: Այստեղից էլ հասկանալի է, թէ ինչու ամենից շատ պատերազմական գործողութիւնները այս երկրում են եղել: Մշակոյթի խոշոր կենտրոն լինելով հանդերձ՝ Հայի երկիրը վերածուել է նաեւ աւարի ու արեան, ցեղասպանութեան ու գաղանային բռնութիւնների թատերաբեմի:

հնդեւրոպական լեզուն:

Պղնձի դարին յաջորդում է բրոնզի դարը, կատարում է աւելի պինդ մետաղի՝ բրոնզի ձուլման գիւտը (պղնձի, անագի, կապարի խառնուրդ): Հայկական լեռնաշխարհի տարբեր մասերում յայտնաբերուել են բազմաթիւ ձուլարաններ: Այս հարցը հանգամանորէն մեկնաբանուած է Հ. Մարտիրոսեանի (1964) ծաւալուն մեծագրութեան մէջ: Ցոյց են տրուած բրոնզի դարի տարբեր փուլերը, նրանցում ծաւալուած իրադարձութիւնները:

Հայկական լեռնաշխարհի կենտրոնում՝ Արարատեան դաշտում, Ք. ա. 3-րդ հազարամեակի վերջերին եւ 12-րդ հազարամեակում մշակոյթի բուռն զարգացում է նկատուում: Այդ են ցոյց տալիս Մեծամորում վերջերս յայտնաբերուած բազմաթիւ ձուլարանները, ժայռերի վրայ կատարած փորագրումները, աստղաբաշխական նշանակութեան քանդակները: Սրանց հնագիտական նիւթերը ապացուցում են տեղաբնիկների՝ Ազա երկրի բնակիչների մշակութային բարձր մակարդակը: Մի հանգամանք, որ շատ կարեւոր է հետագայ մեր շարադրանքում:

Բրոնզի դարին յաջորդում է երկաթի դարը: Երկաթի գիւտը մի նոր յեղափոխութիւն էր: Մորզանը, Գորդոնը, Չայլդը, Դիկչիտը եւ ուրիշներ հնագիտական հարուստ նիւթերի հիման վրայ եկել են այն եզրակացութեան, որ հանքաքարից երկաթի ձուլման պատիւը պատկանում է Հայաստանի բնակիչներին: Այսպիսով Հայկական լեռնաշխարհը մետաղաձուլութեան այն օջախն է եղել, որտեղից այդ մշակոյթի ալիքները տարածուել են այլ երկրներ:

Մինչեւ երկաթի դարը Հայկական լեռնաշխարհում կեանքի անընդմէջ լինե-

լու հանգամանքը ապացուցուում է հիմնականում հնագիտական նիւթերի հիման վրայ: Երկաթի դարից արդէն ստոյգ գրաւոր յիշատակութիւններ կան Հայաստան-Արմենիայի մասին եւ եղած նիւթերը անառարկելիորէն ցոյց են տալիս հայերի տեղաբնիկ լինելու հանգամանքը:

6. Միգրացիոն հնարովի տեսութիւնը:

Մինչեւ 19-րդ դարը Հայերի ծագումը պատկերացում էր ըստ Աստուածաշնչի: Այսպէս՝ Համաշխարհային ջրհեղեղից յետոյ Նոյի երեք զաւակները՝ Սեմը, Քամը, Յաբեթը սերունդներ ունեցան: Նրանց սերունդներն էլ Արարատից տարածուեցին աշխարհով մէկ: Հաբեթի թոռներից սերուել են հայերը: Հայագէտներից շատերը ջանում էին ապացուցել, որ մարդկութեան լեզուն՝ Ադամի լեզուն, եղել է հայերէնը: Մ. Չամչեանը «Պատմութիւն Հայոց»-ի (1784) առաջին հատորում գրում է, որ հայոց լեզուն առաջ է եկել աշտարակաշինութիւնից առաջ եւ հանդիսանում է մարդկութեան մայր լեզուներից մէկը: Այս տեսակէտին էին հետագայում Ղ. Ինճիճեանը, Հայկազեան բառարանի հեղինակները եւ ուրիշներ: Ռուս եւ եւրոպական հեղինակները մինչեւ 19-րդ դարը կրկնում էին այս աւանդական վարկածը: Հայ ժողովուրդը ըստ Աստուածաշնչի տեղական ծագում ունի:

19 եւ 20 դարերում արդէն մօտ երկու հարիւր տարի է Հայ ժողովրդի ծագման ու կազմաւորման հարցը արծարծուում է Հայ եւ օտար պատմաբանների ու լեզուաբանների կողմից:

Ինչո՞ւմն է հարցը, ի՞նչ պատահեց: Վիճաբանութիւնների առաջացումը կապուում է լեզուաբանութեան զարգացման ընթացքում տարբեր լեզուախմբերի դասակարգման ու խմբաւորման պրոբլե-

մի հետ: 1833 թ. Փ. Բոպպը լոյս ընծայեց «Համեմատական քերականութիւն» աշխատութիւնը, 1837 թ. Հ. Պետերմանը դրեց հայերէնի համեմատական ուսումնասիրութեան հիմքը, որի համաձայն հայոց լեզուն պատկանում է հնդեւրոպական խմբին:

Բայց լեզուախմբերը դասակարգելու զուգընթաց պէտք էր գտնել լեզուն կրողների նախահայրենիքը՝ աշխարհագրական տարածքը: Երկար պրպտումներից յետոյ այդ էլ «գտան»...

Եթէ լեզուն հնդեւրոպական է, ապա, չգիտես ինչու, այն անպայման պէտք է ծագած լինի Եւրոպայում: Առանց լուրջ հնագիտական հիմքեր ունենալու միայն լեզուաբանական վերլուծումների հիման վրայ, ընդ որում շատ սակաւ, վիճելի ու կասկածելի նիւթերի հիման վրայ, հնդեւրոպական լեզուի կրողների նախահայրենիքը տեղադրեցին կենտրոնական Եւրոպայում: Առաջացաւ այսպէս կոչուած միգրացիոն տեսութիւնը, որը զարգացրին Մեյլէն, Մոուլէն, Ֆրադեհը, Էսպերանտոն, Դեպրէն, Ծմիդտը, Մարկվարտը, Կրեչմերը եւ ուրիշներ:

Այստեղից ծագեց մէկ այլ պրոբլեմ՝ եթէ նախահայրենիքը Եւրոպայում է, ապա պէտք է գտնել հայերի գաղթի ուղիները: Սեղանին դնելով Եւրոպայի քարտէզը, նկատեցին, որ ամենից մօտիկը եւ յարմարը Բալկանների վրայով է՝ դէպի Փոքր Ասիա: Այս վարկածը հիմնաւորուող համար հարկ էր գտնել ինչ-որ ապացոյցներ. այդ էլ «գտան», յարմարեցրին: Դրանք ժողովրդի յիշողութեան մէջ պատուող առասպելներն էին, թէ ինչպէս քաջերի մի խումբ «Արգո» նաւով ուղեւորուում է Կողքիս (Կոլխիդա)՝ յափշտակելու կախարդական ոչխարի ոսկէ գեղմը, ինչպէս նրանք վիշապների դէմ սխրա-

գործութիւններ են կատարել: Ահա նրանց մէջ էր Արմէնոսը, որին վերագրուում է Արմենիան հիմնադրելու պատիւը:

Նման առասպելները բաւական շատ էին եւ յոյն պատմիչները դրանց հիման վրայ յօրինում էին տարբեր վարկածներ: Այս կապակցութեամբ Ի. Դեակոնովը (1968) գրում է, որ Հերոդոտոսի եւ Էւդոքսոսի վկայութեամբ հայոց լեզուն շատ նման է փոփոխացիների լեզուին, եւ մենք հիմք չունենք չհաւատալ նրանց: Եւ ահա այս ճանաչուած պատմաբանը այդ հիմքի վրայ հայերին եկուոր է համարում: Այստեղ նշենք, որ հայ խոշոր լեզուաբանները (Հ. Աճառեան, Օ. Հազար, Ա. Ղարիբեան, Գ. Զահուկեան, Ռ. Իշխանեան ու ուրիշներ) ժխտում են հայոց լեզուի եւ փոփոխացիների լեզուի նմանութիւնը:

Այստեղ նշենք, որ հայ լեզուաբաններից շատերը առանց քննադատութեան ընդունեցին հայերի եկուորութեան վարկածը, անտեսելով էթնոգենեզի օրինաչափութիւնները (Գ. Խալաթեանց, Յ. Դադփութիւնները (Գ. Խալաթեանց, Յ. Դադփութեան, Յ. Առաքելեան, Լէո, Գ. Մեսրոպ, Հ. Աճառեան, Հ. Մանանդեան, Խ. Սամուէլեան եւ ուրիշներ): Բաւական է ընթացեցէ Հ. Աճառեանի «Հայոց լեզուի պատմութեան» 1-ին մասը (1940), եւ անպատմութեան» միջապէս պարզ կը դառնայ, որ խոշոր լեզուաբանը եկուորութիւնն ընդունում էր առանց քննադատութեան, որպէս արդէն պատրաստի տեսութիւն եւ մնացած դէպքերում վերլուծութիւնները աշխատում էր բոլոր վերլուծութիւնները աշխատում էր բխեցնել այդ հիմքից: Բայց վերլուծումներում բերուած նիւթերը արդէն ժխտում են եկուորութեան գաղափարը: Նոյնը կատարել են եկուորութեան վարկածի միւս հետեւորդները:

Կարծես բոլորը հիպոսացուած էին, կարծես խայծ էր, որից կառչեցին շա-

գոյութիւն է ունեցել Հայ անունով քաղաք (էջ 913):

Գ. Բ. Զաչուկեանը (1987) գրում է, որ հայոց լեզուի առանձնակի (անկախ) զարգացումն սկսում է Ք. ա. 3-րդ հազարամեակի սկզբներից, եւ ինքնուրոյն գոյութեան նախազրային ժամանակաշրջանի համար առանձնացնում է երկու շրջան, իւրաքանչիւրը՝ երկու ենթաշրջանով:

Վերջին տասնամեակներում բազմաթիւ նիւթեր են կուտակուել, որոնք կողմնակի կերպով եւս ցոյց են տալիս, որ հայերը տեղաբնիկ են: Բերենք դրանցից մի քանիսը: Յ. Ա. Մարտիրոսեանը, Յ. Ռ. Իսրայէլեանը (1971) մանրամասն վերլուծելով Զաւախքի, Գեղամայ, Սիւնիքի բարձրաւանդակների ժայռապատկերները, ցոյց են տալիս, թէ ինչպէս մշակոյթը սկսած մեզոլիթից ու էնէոլիթից, զարգանալով հասել են առաջին հազարամեակ (Ք. ա.): Նրանք ժայռապատկերները խմբաւորում են ըստ բովանդակութեան՝ առանձնացնում են կրօնապաշտամունքային, աստղաբաշխական, առօրեայ կեանքի՝ որսի եւ այլն: Ժայռապատկերները ցոյց են տալիս, թէ ինչպէս աստիճանաբար ձեւաւորում են գաղափարազրեւր, նշանազրեւր, պիկտոգրաֆիկ գրութիւնները: Ապացուցում են, որ նախազրային նշանազրեւրը իրենց բարձրակէտին են հասնում ուրարտական թագաւորութեան սահմաններում: Պարզուել է, որ հայ առասպելաբանական էակների եւ նախադարեան ժայռանկարների միջեւ մօտիկ աղերսներ կան, որոնք շարունակում են ուրարտական արուեստի յուշարձաններում, հասնում են մինչեւ «Սասնայ ծռեր»: Հայկական առասպելները, վիշապ օձերը, պայքարը նրանց դէմ իրենց լրիւ արտայայտութիւններն են գտնում ժայ-

ռապատկերներում: Յատուկ նշում են մայր աստուածութեան կապը բուսական աշխարհի հետ: Աստուածամօր պաշտամունքի հետ կապուած գաղափարախօսութիւնը, ծէսերն ու պատկերացումները անընդմէջ շարունակում են Հայաստան աշխարհում հազարամեակների ընթացքում:

Յ. Ա. Մարտիրոսեանը (1978) յատուկ վերլուծութիւններ է նուիրել աստղաբաշխական բնոյթի փորագրութիւններին: Մանրամասն նկարագրում է կենդանակերպը (զոդիակ): Պարզուել է, որ կենդանակերպը մեր նախնիների յայտնագործութիւնն է: Պարզուել է նաեւ, որ եթէ Բաբելոնը՝ ջրի, իսկ Եգիպտոսը աւազի ժամացոյցների հայրենիքն է, ապա Հայաստանը արեգակնային եւ լուսնային ժամացոյցների հայրենիքն է:

Մեր նախնիները Երկիրը պատկերացրել են կլոր, գիշերային ժամերին կողմնորոշուել են Բեւեռային աստղի միջոցով: Հետաքրքիր է, որ մեր նախնիները 3-2-րդ հազարամեակներում գաղափար ունէին տեսանելի հինգ մոլորակների մասին. դրանց գումարելով Արեւ եւ Լուսին պաշտամունքը՝ ստացել են 7 թիւը, որը շատ հին ժամանակներից սուրբ թիւ է համարուել:

Հետաքրքիր ուսումնասիրութիւններ է կատարել Լ. Շահինեանը (1984), որը ցոյց է տալիս, թէ ինչպէս խեցեգործութիւնը, տնաշինական արուեստը, կենցաղային սովորութիւնները, հէնց թէկուզ լայնալիճ աղեղը, որ գործածել է լեգենդար Հայկը Բելին սպանելիս, 3-րդ հազարամեակից դալիս-հասնում է 1-ին հազարամեակ: Նոյն հեղինակը մէկ այլ աշխատութեան մէջ (1990) ցոյց է տալիս, որ 3-րդ հազարամեակի կէսերին Հայաստանում արդէն տնտեսական բոլոր հիմքերը

կային դասակարգային հասարակութեան զարգացման եւ պետութեան առաջացման համար, եւ փաստորով ապացուցում է, որ ՊատմաՎոր՝ Մովսէս Խորենացու տեղեկութիւնները Հայաստանում գոյութիւն ունեցած պետականութեան մասին հաւաստի են, որ Արամը հայկական հարստութեան եօթերորդ նահապետն է: Նա հնարովի անձնաւորութիւնն է, այլ ապրել ու թագաւորել է մօտաւորապէս 2036-1978 թուականներին, եւ նրան յաջորդել է Արա Գեղեցիկը:

Ռ. Իշխանեանը գտնում է, որ Ք. ա. 3-րդ հազարամեակի կէսերին Հայկական լեռնաշխարհի հիմնական տարածքը հայկազու էր, բնակեցուած էր Հայկական ցեղերով:

Այսպիսով, հայի պետականութիւնը սկսում է 3-րդ հազարամեակից: Այս տեսակէտի օգտին է նաեւ Արտակ Մովսիսեանի կողմից ուսումնասիրուած նիւթեան յայտնաբերուած Արատա պետութեան փաստը (Ք. ա. 28-27 դարեր): Էլ ուր մնացին հայերի եկուորութեան հնարովի վարկածի տարեթուերը (12-9 դդ.):

Երբ ձեւաւորուեց հայերի եկուորութեան վարկածը, Հայաստ-Ազգի մասին ոչ մի տեղեկութիւն չկար, խեթական արուելու դեռ չէր յայտնաբերուել: Բայց չէ՞ իւրեւ ղեռ չէր յայտնաբերուել: Ինչ-չիտէր իր գիրքը գրելու ժամանակ: Ինչպէ՞ս է նա անտեսում այդ փաստը, չէ՞ որ մուշկերի արշաւանքներից շատ առաջ գոյութիւն ունէին Հայաստան եւ հայոց լեզու, հայի պետականութիւնը: Կարծում ենք՝ բերուած փաստերը բաւարար են անպացուցելու, որ հայ էթնոսի եկուորութեան վարկածը շինծու է եւ ոչ մի քննադատութեան չի դիմանում: Մեր ասածը դատութեան չի դիմանում: Մեր ասածը եզրափակենք "Народы мйра" սերիայի "Народы Кавказа" գրքից մի քաղուածքով:

«Նէօլիթի ժամանակ կազմաւորուել է մարդու արմէնոիդ տիպը՝ առաջաւորասիական ուսան, որը ծնուել է Հայկական լեռնաշխարհում եւ տարածուել է այնուհետեւ Առաջաւոր Ասիայի երկրներում» (հատ. 2, 1962):

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ալիշան Ղ., Տեղազիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1885:
Ալպոյաճեան Արշակ, Պատմական Հայաստանի սահմանները, Կահիրէ, 1950:
Արզումանեան Մ., Հայաստան, 1914-17, Երևան, 1969:
Բարսեղեան Լ. Ա., Հայ ժողովրդի ծագման եւ կազմակերպման պրոբլեմը Հայագիտութեան մէջ: ՀՍՍՀ ԳԱ հաս. գիտ. ինֆ. սեկտոր, գիտա-ինֆորմ. բիւլետէն, N 2, 1974:
Աճառեան Հ., Հայոց լեզուի պատմութիւն, 1 մաս, Երևան, 1940:
Գաբրիէլեան Հ. Կ., Մարգարտեայ Սեւան, Երևան, 1980:
Գեւորգ Մեսրոպ, Հայաստան, Կ. Պոլիս, 1919:
Երեմեան Ս. Տ., Հայաստանը ըստ Աշխարհաբնիցի, Երևան, 1863:
Էլիզէ Ռեկլիւ, Լազիստան, Հայաստան, Քրդստան, Վաղարշապատ, 1893:
Իշխանեան Ռ., Լեզուական աղբիւրները հայերի ծագման մասին, «Գարուն», N 10, 1979:
Լէօ, Հայ հայրենիքը, Թիֆլիս, 1915:
Խանգաղեան է., Հայկական լեռնաշխարհի մշակոյթը III հազարամեակում, Ե., 1967:
Խաչատրեան Ա., Հայաստանի սեպագիր շրջանի քննական պատմութիւն, Ե., 1967:
Խաչատրեան Ժ., Իրանա-հայկական դիցաբանութեան աղբիւրների հարցի շուրջը, Լրատեսակ հասարակական գիտ., N 2, 1981:
Լինչ Հ. Յ. Պ., Հայաստան. Ուղեւորութիւններ, Ա. հատ., Կ. Պոլիս, 1913:
Հայ ժողովրդի պատմութիւն, հատ. 1, Երևան, 1971:
Հայ ժողովրդի ծագման եւ կազմակերպման պրոբլեմը Հայագիտութեան մէջ, Ե., 1974:
Յակոբեան Թ., Հայաստանի պատմական աշխարհագրութիւն, Ե., 1968:
Յարութեան Բ. Յ., «Աշխարհացոյց»-ը եւ Յարութեան Բ. Յ., «Աշխարհացոյց»-ը եւ չորս Հայքերի խնդիրը, Ե., 1997:
Մարտիրոսեան Յ., Գիտութիւնն սկսում է նախնադարում, Ե., 1978:

Մարտիրոսեան Յ., Իսրայէլեան Յ., Գեղամայ լեռների ժայռապատկերները. Հայաստանի Հնագոյն յուշարձանները, գիրք 6, պր. 2, 1971:

Մովսէս Խորենացի, Հայոց պատմութիւն, Ե., 1981:

Մովսիսեան Ա., Հնագոյն պետութիւնը Հայաստանում Արատտա, Ե., 1992:

Նահինեան Լ., Արամ-Արմէ նոյնացման հարցի շուրջը, «Մանկավարժ», թիւ 11, 1990:

Նահինեան Լ., Գիրք դարերի խորքից, Ե., 1984:

Չամչեան Մ., Պատմութիւն Հայոց, հտ. 1-3, Վենետիկ, 1784-1786:

Պրոտրովսկի Բ. Բ., Հայ ժողովրդի ծագման հարցի շուրջը, Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԱ Հասարակական գիտ., N 6, 1945:

Ջահուկեան Գ. Բ., Հայոց լեզուի պատմութիւն. նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987:

Սարգսեան Գ. Խ., Նախահայրենիքի ժողովրդի կազմաւորման եւ Ուրարտուի մասին, ՊԲՀ, թիւ 1, 1990:

Ստրաբոն, Քաղեց եւ թարգմանեց Հ. Աճառեան, Ե., 1940:

Վարպետեան Ա., Ովքե՞ր են ի վերջոյ արիացիները, Ե., 1990:

Бунак В. В. *Grania Armenica*. Тр. антропологии Нии при МГУ, вып. II, М., 1927.

Гечачилидзе Р. Г. Турция, М., 1963.

Гордон Чайлд. Древний Восток в свете новых раскопок. М., 1956.

Гамкрелидзе Т. В., Иванов В. В. Индоевропейский язык и индоевропейцы. т. I, II, Тбилиси, 1984.

Голобородько Н. Н. Турция, 1963.

Дерсим Даркот. География Турции, М., 1959.

Дьяконов И. М. Предыстория армянского народа, Е., 1968.

Карагезян О. О. Фракийцы на юго-западе Армянского нагорья, 1981.

Карагезян О. О. Проблема этногенеза и самоназвания армянского народа по клинописным источникам. - Вестник общест. наук АН Арм. ССР, 1968, N 7.


Капанцян Гр. Хайаса-колыбель армян. Е., 1947.

Кочар Н. Р. Антропология армян, изд. АН Арм. ССР, Е. 1989.


Лундшувейт Е. Ф. Турция, М.-Л., 1946.

Минеральные ресурсы Турции. Минеральные ресурсы зарубежных стран. Вып. 12, М. 1949.

Сардарян С. Палеолит Армении, Е. 1954.



Նկ. 1 Հայկական լեռնաշխարհ, նրա սահմանները:



Նկ. 2 Պատմական Հայաստանի բաղադրամասերը: 1. Մեծ Հայք, 2. Փոքր Հայք, 3. Միջագետք Հայոց, 4. Կիլիկիա 5. Ատրպատնաց գաւառ, 6. Մարաց ամրոյ աշխարհ